

**Տ. ԶԱՎԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՆՉԻՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ
ԽՈՍՎԱԾ Ս. ԷՇՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(14 սեպտեմբերի 2003 թ.)

**«Ուխտու դիք և կարարեցէք Տեսան
Ասդուծոյ մնայոյ ամեններեան որ շուրջ էք զնովա»:
(Սաղմ. Ճե 12)**

«Յանուն Նօր և Որդույ և Տոգույն Սրբոյ. ամէն»:

Վեհափառ Տէք և շնորհազարդ Հայրապետ,

Հայաբացեալ և սիրեցեալ ժողովուրդ մեր,

Եզիպահայ վարժարաններու նախկին շրջանաւարդները գեղեցիկ սովորութիւն ունին երկու տարի անգամ մը աշխարհի վարքեր ցամաքամատերէն մնկուն երկրի մը մէջ հաւաք կազմակերպելու և զեղարուեսպական ձեռնարկներէ գոյացած գումարը Հայասպանի Հանրապետութեան զանազան շրջաններէն մնկուն մէջ դպրոցի մը նորոգութեան, կահյոքի գրեման կամ խոնարհած Եկեղեցիի մը նորոգութեան հագլացնելու: Այսպէս, անոնք հաւաքներ կազմակերպած են ի Կալիֆոռնիա, ի Կանադա, ի Աւստրալիա, յԵգիպտոս և այս տարի հայրազարդ մեր Հայրենիքին՝ Հայասպանի Հանրապետութեան մէջ: Եւ իրենց այս հաւաքը գեղեցիկ գուգաղիպութեամբ կը համընկի Մայր Տաճարի նատակագիրի 17-րդ դարադրածի յօրելինական հանդիսութիւններու և տօնակապարութեանց: Արդարեն, Հայոց պերականօրէն քրիստոնեացումն եւրոպ առաջին կառուցուած Տաճարին ուխտի եկած էք հոծ բազմութեամբ: Թող Ասպուած ձեր ուխտը ընդունելի ընէ: ամէն:

Այս սրբավայրը հայ ժողովուրդի քաղաքակրթութեան, հայ ժողովուրդի հոգեւոր զարգացման համոյապայքըն է: Մեր մաքրենազիրներէն Ազաթանգեղոս կը պարմէ, թէ ինչպէս երկինքը բացուցաւ և մեր հաւաքը Հայրը՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, դիսաւ Միաձինը, որ երկինքն իջաւ Արարատեան դաշտին վրայ, ոսկի մուրճով գետինը բախեց և հրելեն սիներ դիսուուցին: Պատմիքը այսպէս կը նկարագրէ: «Եւ սինն իրենին կաթողիկէ Եկեղեցի է, որ ժողովսաց ամենայն ժողովուրդն ի մի միարանութիւն հաւաքոց ի ներքոյ թեսոցն իրոց և դեղին այն լիցի տաճար Ասպուածոյ և դուռ աղօթից ինդրուածոց ամենայն հաւաքացեաց. և արռո քահանայապետութեան, իսկ կամարքն, որ սեանց անդի ի միմնանս կապէին, այսինքն է հաւասարութիւն միաբանութեան Կաթողիկէ Եկեղեցոյ»:

Տեսր այնու կրնանք ըսկէ, թէ Հայասպաննեայց Եկեղեցիի շոշափելի արդայայբութիւնը եղաւ Մայր Արոռ Ս. Էջմիածինը, Հայոց Հայրապետութիւնը, և Հայրապետը ինքը այլաւ անձ չէ, այլ Հայրապետութեան խորհրդանիշը: Ս. Էջմիածինը հայոց զգայուն սիրովն է, որովհետեւ 17 դար ապրած է ժողովուրդին հետք՝ անոր դիմութեան հետք դրբակից և ուրախութեան մասնակից ըլլալով: Հայասպաննեայց Եկեղեցոյ կենտրոնը, ուրեմն, Քրիստոսի իշխան աւելքարանական կամ դիմարդութեան ճշմարդութեան հայկական ընկալումն է,

մարմնացումն է: Ուրիշ ազգեր, սիրելիներ, կրնան և ձեզմի շափեր դիսած են, թէ Երուալի մայրաքաղաքներու և քաղաքներու մէջ ինչ մեծ մայր քամարներ ունին շրեղ, ապշեցնող ճարդարապետութեամբ:

Ս. Էջմիածինը իբրև կոթող կրնայ փոքր ըլլալ, բայց այս մերն է, և Միամին Ինքը մարմնացոյց ըրա այս վայրը իբրև աղօթքի գուն, Հայրապետական Աթոռի վայր: Իջման Սուրբ Սեղանին ավոտոս հաւաքրի ուժը և ոգեկանութիւնը անսահման են, որմէ ներշնչուելով մեր նախնիք՝ երանեալ Հայրապետներ, վանականներ, հոգեւորականներ, մասքենագիրներ, սփեղծագործած են: Այդ հաւաքրի ամոր վկան է Էջմիածինը: Սիրելիներ, ան կը բաշխուի, բայց չի նուազիր, խոր է անոր կենսափործը, որքան բաշխուի, այնքան կը շափնայ, ինչքան լոյս սփուտ, այնքան կը շողայ: Ս. Էջմիածինը, մեր ըլլալով հանդերձ, և նաև ամող աշխարհինը, քանի որ խոր է անոր հիմք և հաւաքրի վեմը:

«Ուխսու դիք եւ կարարեցէք Տեսան Ասպուծոյ մերոյ»:

Ուխսաւորներ, ոխսր որքը մեր Տիրո՞ Ասպուծոյ, Ս. Գրիգոր Լուսաւորչի: Մեր հաւաքրի հօր Նշանարները միայն այսդեղ չմնացին, այլ սփոռուցան նաև զանազան երկիրներ: Այսպէս, օրինակ, Բարեկեն Օթմսեցի Կաթողիկոսի օրով և Զենոն կայսեր խնդրանքով մասունքներ փոխադրուցան Կոսպաններուարիս 405 թուականին: Խոկ Վասիլ կայսրը Թէոփիլիտ անոնով զաւակ մը ուներ, որը այսահար էր, դիսահար: Իր նախարարներէն մեկուն հանձնեց Վասիլ կայսրը իր զաւակը, և երկուքը մէկ եկեղեցի զացին: Այնպես եկեղեցիին մէջ պարանին պոռաց. «Ու է Ս. Գրիգոր Լուսաւորչ, որ ինձի պիսի թժկէ!»: Այնուեղ փառապան մը կար, պարանին ձեռքը դապանին զարկաւ և, ո՛վ զարմանք, ո՛վ հրաշք, այսահար այդ դրան թժկութեա: Տապանը բացին և մեջէն մարմարեայ դրուի դրուս եկաւ, որուն մէջ մեր հաւաքրի հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի մասունքները կային:

Այսօր, սիրելի եղբայրներ և քոյրեր, մեր Եկեղեցին կը գոնէ նաև Ս. Խաչի Վերացման դրուն: Եկեղեցւոյ մէջ գոնուած հինգ դապաւարներուն վերջինն է, հինգերորդն է: Եթէ փարտոյն ընթացքին Ս. Կոյս Մարիամի յիշափակը ինը անզամ կը գոնենք, Ս. Խաչը չորս անզամ կը գոնենք, որոնցմէ երեքը ընդհանրական Եկեղեցիին կը պարկանին, խոկ չորրորդը Հայ Եկեղեցիին կը Վերաբերի միայն: Այդ չորս գոնենքն են՝ Երեւման Ս. Խաչ, Գիւր Խաչ, Վերացման Ս. Խաչ և Վարազայ Ս. Խաչ: Ասոնցմէ ամենէն պարուականը Վերացման Ս. Խաչի գոնն է, որովհետեւ խաչը, սիրելիներ, մեզի շափ հարազափ երեւոյթ մըն է, մեր Եկեղեցիներու զմբերներուն վրայ կը դնենք զայն, մեր մօրէն՝ այս աշխարհէն յափիտնութեան անցած մեր սիրելիներու շիրիմին վրայ կը զերեղենք, մեր կուրծքէն, վիզէն կանցցներ, սնարին վրայ կագուցներ, վերջապէս շաբ միբերիմ երեւոյթ մըն է, որովհետեւ խաչը չի ընծայուիր որպէս պարժական միջոց, այլ Հայր Ասպուծոյ հետ հաշպութեան նշան:

Խաչին ճառը, խաչին խորհուրդը շաբ ընդարձակ է, շաբ խոր է: Մարդ կրնայ իմանալ, մարդ կրնայ հասկնալ, թէ Ասպուծ Իր ամենակարորդութեամբը կրնայ դիեզերքը սփեղծեն, բայց դժուար կը հասկնայ, թէ ինչպէս Ասպուծ կրնայ գալ և խաչուի: Խաչը յաղթութեան նշան մըն է, որովհետեւ ներքին ծայն մը մեզի կ'ընէ՝ «Սովա յաղթեսցես»: Քրիստոնեաները սկզբանական դարերուն, երբ կրկեսներուն մէջ կը նեփուիին, ձեռքերնին կամ զիրկերնին ունեին միայն խաչը: Նոյ Նահապետ երբ որ մարդոց մնարքերու ալիքներուն վրայ կը դա-

դամեր, փայտին միջոցա փրկութեա: Այդ Դին Կորակարանն էր: Նոր Կորակարանին մէջ մներ խաչեալ Քրիստոսի խաչափայտին կը նայինք և մեր մնողերէն կը փրկութինք:

Նախամարդը, նախաճնողը դրախտին մէջ ծառին, փայտին պարուղէն կերան և մահուամբ պազժութեան, արդարաքութեան դրախտին: Յեպոյ, Ասքուծոյ Որդույն համեղաճաշակ մարմինը գամուելով փայտին վրայ, մնեք այդ մարմինը և արինը ճաշակելով մեր մեղքերէն կը սրբութինք և յափառութեան ժառանգորդ կը դառնանք: Այս է խաչին խորհուրդը, խաչին իմաստը: Խաջը Եկեղեցոյ փառքն է, առաքեալներու պարծանքը, մարդիրուսներու պսակը, թագաւորներու յաղբութինը, վարդապետներու ողջախոհութինը, հիւանդներու թշկութինը, ճամփորդներու առաջնորդը: Խաջը փրկութինն է բոլորին:

Այսօր, սիրեկիներ, այս Սուրբ Տաճարին մէջ, որուն կառուցման 1700-ամսակի յորելինական հանդիսութինն է, եկած ենք գունդազուն՝ բանալու մեր սրբերը, աղերսելու երկնաւոր մեր Նոր և ըսելու. «Ով Տէր Ասքուած հարցն մերոց, Սուրբ և Անմահ Պարագային միջնորդութեամբ և բարեխօսութեամբ Ս. Կոյս Ասքուածանին և անբարրաս բարեխօս Ս. Խաչին, ընդունե մեր աղօթքները և անսասան պահէ Մայր Վթոռ Ս. Էջմիածինը ի շինութեան և ի շենութեան, և անոր զահակալին՝ Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Երկրորդ Կաթողիկոսին պարգևէ երկար կեանք, առողջութիւն և Իր գործոց հաջողութիւն:

Ո՞վ Տէր, մեր աղաջանքն է, որպեսզի մեր հարազար պետութեան այրերը շնորհազարդներ յօդութ մեր ժողովուրդի բարօրութեան և մեր երկրին յառաջդիմութեան, որպեսզի ամենք ալ, մեր ուխըր կարաքելով, կարենանք ինչպէս այսօր, միշտ և յափառեան փառաւորել զանոն Ամենասուրբ Երրորդութեանդ, որ է օրինեալ այժմ և միշտ և յափառեանս. ամէն»: